

Գոտեորքին՝



Հիվանդություն, որին պետք է լրջությամբ մոտենալ:

Վտանգը

Եթե ունեցել եք ջրծաղիկ (իսկ Ամերիկայում չափահասների 90%-ից ավելին ունեցել է), դուք ենթակա եք Գոտեորքինի վտանգին:

Գոտեորքինը (Shingles) առաջանում է այն հարուցիչից (վիրուս), որը առաջացնում է ջրծաղիկը: Եթե անձը ունեցել է ջրծաղիկ, հարուցիչը կարող է ապրել, բայց տարիներ շարունակ անգործոն մնալ ձեր մարմնի որոշ ներվերի արմատներում: Երբ նա վերստին գործոն դառնա, սովորաբար կյանքի ուշ տարիներին, կարող է Գոտեորքին առաջացնել: Գոտեորքինի վտանգը մեծանում է ձեր տարիքի առաջացման հետ: Գոտեորքինը կարող է առանց ազդարարության վնասել որևէ անձի որը որևէ ժամանակ ջրծաղիկ է ունեցել: Ոչ մի հնարավորություն չկա ասելու, թե ո՞վ կենթարկվի Գոտեորքինի կամ ե՞րբ կպատահի այն:

Հիվանդությունը՝

Գոտեորքինի առաջին նշանները հաճախ զգացվում են, բայց թերևս տեսանելի չլինեն:

Սրանք կարող են ընդգրկել՝ • քորը • ծակծկոցը • այրոցը

Մի քանի օր հետո երևան կգա հեղուկով լցված բշտիկների մի ցան (սովորաբար մարմնի կամ դեմքի մի կողմում): Բշտիկներից ապաքինման համար կպահանջվի 2-ից 4 շաբաթ:

Գոտեորքինը կարող է ցավ պատճառել և լուրջ խնդիրներ առաջացնել:

Մարդկանց մեծ մասի մոտ Գոտեորքինի պատճառած ցավը նվազում է նրա ապաքինման ընթացքում: Բայց ցանր ապաքինվելուց հետո, Գոտեորքինը կարող է առաջնորդել մի այնպիսի ցավի, որը կարող է տևել ամիսներ կամ մինչև անգամ տարիներ որոշ մարդկանց մոտ: Այս երկարատև ներվացավը, որը կոչվում է հետ-հերպետիկ ներվացավ (postherpetic neuralgia/PHN), պատահում է, որովհետև Գոտեորքինը առաջացնող հարուցիչը Կարելի է վնասել որոշ ներվերի:

Ցավերը կարող են զանազանվել՝ • այրոց և բաբախում • ծակոց և մրճահարում

Երկարատև ներվային ցավ ունեցողներից շատերի համար մինչև անգամ փափուկ լաթի հպումը մաշկին կարող է ցավ պատճառել:

Գոտեորքինից առաջացող ուրիշ լուրջ խնդիրներից են՝ մաշկի վարակը, մկանների թուլությունը, սպիներով ծածկվելը, տեսողության կամ լսողության նվազումը կամ կորուստը:

Տարիքի Գործոնը՝

Որքան ձեր տարիքը առաջանա, այնքան ավելի ենթակա կլինեք Գոտտորքինի վտանգին:

Պատճառն այն է, որ ձեր մարմինը չի կարող ինքնապաշտպանվել Գոտտորքինը առաջացնող հարուցիչի դեմ այնպիսի հաջողությամբ, ինչպիսին կլինեք ձեր երիտասարդ տարիքին:

- Միացյալ Նահանգներում շուրջ 1 միլիոն Գոտտորքինի դեպքերի կեսը ամեն տարի պատահում է 60 տարեկան և ավելի տարեց անձերի:
- Մինչև 85 տարիքը ապրող մարդկանց 2-ից 1-ը կենթարկվի Գոտտորքինի:
- Որքան ձեր տարիքը առաջանա, այնքան կարող է երկար տևի Գոտտորքինի ցանը:

Որքան ձեր տարիքը առաջանա, այնքան ավելի ենթակա կլինեք երկարատև ներվացավի վտանգին:

Երկարատև ներվացավը ավելի մեծ ցավ է պատճառում և ավելի երկար է տևում չափահասների մոտ:

Բուժումը՝

Անմիջապես դիմեք ձեր բժշկին կամ առողջապահական մասնագետին, եթե կարծում եք, որ Գոտտորքին ունեք, որպեսզի բուժումը սկսվի հնարավորին չափ շուտ:

Լրացուցիչ Տեղեկություն Զեռք Բերելու Լավագույն Միջոցը՝

Զեռ բժիշկը կամ առողջապահական մասնագետը կարող է պատասխանել Գոտտորքինի մասին ձեր հարցերին և ասել, թե ենթակա՞ եք նրա վտանգին:



Կարող եք նաև Գոտտորքինի մասին լրացուցիչ տեղեկություն ձեռք բերել այս կայքէջից՝ shinglesinfo.com:

